«ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԸ։ ԺՈՂՈՎԱԾՈՒ», հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 310 էջ։

Ժողովածուում զետեղված են 10 հոդված։ Գրանցում խոսվում է Հեթում պատմիչի, միջնադարյան ֆրանս-հայկական գրական կապերի, գերմանական մի լեգենդի հայկական ակունքների, Լեհաստանում հայ գրականության (XVI—XVII դդ.) ավանդույթների շարունակող Մինաս Թոխաթեցու մասին։ Լուսաբանվում են Սերվանտեսի և հայ գրականության, Վոլտերի փիլիսոփայական արձակի ու հայ գրական-հասարակական մտքի փոխառնչությունները։ «Լեսինգի «Նաթան իմաստունը» հայ գրականության մեջ», «Ֆրանսիական պոեզիան «Անահիտ» հանդեսի էշերում» հոդվածներում քննվում են եվրոպական գրականության, թարգմանության խնդիրները։ Հետաքրքրությամբ են ընթերցվում հայ գրական կյանքում պառնասականության, Վահան Տերյանի և Շառլ Բոդլերի պոեզիային, հայ ժողովրդի մեծ բարեկամ Ռոմեն Ռոլանին նվիրված հոդվածները։ «Հաղորդումներ» բաժանում ներկայացվում են Մկրտիչ Էմինի՝ շեքսպիրյան երկերի թարգմանության փորձերը և սովետական շրջանում գրական կապերի ուսումնասիրության խնդիրները։

Գրքի պատասխանատու խմբագիրներն են Կ. Հ. Ճինգոզյանը և Վ. Հ. Փարթամյանը։

«ՏԱՐԵԳԻՐՔ (1987), ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ», Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 196 էջ։

Տարեգրքում զետեղված են ինը տեսական հոդվածներ, որտեղ խոսվում է մարդկային գործունեության համակարգում ստեղծագործության տեղի և դետերմինացիայի, ստեղծագործական գործընթացի փուլերի ու ենթագիտակցության, հայտնագործության տրամաբանության (գիտատեխնիկական որոնման օպտիմալ եղանակի ուսումնք) մասին։ Քննվում են՝ ստեղծագործականը և ստերեոտիպայինը մշակույթում, հասկացումը գիտական իմացության մեջ, փիլիսոփայական ստեղծագործության յուրահատկությունը, փիլիսոփայական դրդապատճառները գիտական տեսության կառուցման գործընթացում, գեղարվեստական ստեղծագործության հասկացումը և ենթագիտակցության ու ինտուիցիայի դերը։

Տարեգիրքն ունի Երիտասարդ փիլիսոփայի ամբիոն, Տարեգրքի հյուրերը, Գրախոսություն բաժինները։ Հոբելյանական տարեթվեր բաժինը նվիրված է Համլետ Գևորգյանին, Միքայել Մինասյանին, Ալեքսանդր Թևոսյանին, Ռոբերտ Ջիջյանին և Գևորգ Խրլոպյանին։ Գիրքն ունի Լրատու և ուշագրավ տվյալներ է պարունակում հեղինակների մասին։

Գլխավոր խմբագիրն է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանը։

ՏԻԳՐԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ—Հայկական ազգանուն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 321 էջ։

Աշխատության վեց գլուխներում ներկայացվում են հայերի անվանման բանաձևերը, հայկական ազգանունների ձևավորումը (I, II), լուսաբանվում են ազգանվանական հիմքերի ծագումնաբանական, ժամանակային դասակարգումը, ազգանվանակերտ անձնանուն հիմքերի կառուցվածքային դասակարգումը և անձնանվան տարբերակային ձևերը՝ իբրև հիմք (III)։ IV գլխում խոսվում է ոչ անձնանուն ազգանվանական հիմքերի մասին (ուղեկցող բառեր, «արհեստավոր, զբաղմունք», «պաշտոն, աստիճան» իմաստներով բառեր, տեղանուններ, մականվանական հիմքեր)։

V և VI գլուխներում քննվում են ազգանվանակերտ ածանցները և ազգանունների հնչյունային, գրային, այլալեզու տարբերակները։ Գիրքն ունի ազ-

գանունների ցանկ, համառոտագրություններ և գրականության ցանկ։
Պատասխանատու խմբագիր՝ Ա. Ե. Սարգսյան։

ԳԱՐԵԳԻՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ—Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 364 էջ։

Հատորում զետեղված են 21 հոդված։ Հոդվածներում ժամանակագրական կարգով լուսաբանվում են հայկական մանրանկարչության, հայ արվեստի ծագման ու ոսկեդարի վերաբերյալ հարցերը, խոսվում է հայ տաճարների գմբեթավորման, գերեզմանական հին կոթողների, ԺԷ—ԺԸ դարերում Էջմիածնի տաճարի նկարազարդման ու ծաղկազարդման հարցերի մասին։ Պատմվում է «սարկավագ», գրիչ, նկարիչ, արձանագործ Մոմիկի, նկարիչ Սարգիս Խաչատուրյանի, գրիչ և նկարիչ Թեոդորոսի մասին։ Ներկայացվում են՝ Խիզան քաղաքի պատմությունից մի էջ, գրառում Մատենադարանի տպավորությունների մատյանից, Կաթողիկոսարանի ցուցահանդեսը։ Հետաքրքրությամբ են ընթերցվում Բարձրաբերդի ոսկեկազմ Ավետարանին, Հեթում Ա-ի նկարազարդ Ավետարանին (մասնավորապես մնացորդներին), հայ-արաբական բժշկական և մշակութային հարաբերություններին նվիրված հոդվածները։

Հատորն ունի ծանոթագրություններ և Գ. Հովսեփյանի օգտագործած գրականության ցանկ, վերատպություններ։

Բնագիրը պատրաստել և ծանոթագրել է Մ. Մ. Ղազարյանը։
Պատասխանատու խմբագիր՝ Ն. Հ. Մուրադյան։

ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆ—Սկևռայի գրական մշակութային դպրոցը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, 131 էջ։

Կիլիկյան Հայաստանի գրական-մշակութային խոշոր կենտրոններից մեկի՝ Սկևռայի գործունեությունը լուսաբանող այս մենագրությունը հեղինակի վերջին հետազոտությունն է։ Գրքում խոսվում է Կիլիկիայի հայկական պետության պատմության մեջ քաղաքական ու մշակութային խնդիրների և Սկևռայի մենաստանի մասին։ Ներկայացվում են Սկևռա գրական-մշակութային վանական դպրոցի հիմնադիր, մատենագիր, գրիչ, երենսգետ Ներսես Լամբրոնացու, Սկևռա վանքի ուսուցիչ ու վանահայր Գրիգոր Սկևռացու, ուսուցիչ Գեվորգ Սկևռացու և վարդապետ Մխիթար Սկևռացու կյանքը, նրանց արձակ ու չափածո ստեղծագործությունները։ Ուսումնասիրված են Սկևռա մենաստանի գրչության և մանրանկարչության արվեստը, «մանրուսում» կոչվող երաժշտական ուսմունքը։ Հավելված բաժնում ընդգրկված են Սկևռայում ստեղծված արժեքավոր հիշատակարաններ։

Գիրքն ունի ծանոթագրություններ։
Պատասխանատու խմբագիր՝ Գ. Վ. Աբգարյան։